

ԹԱՐՅԱԿ

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՏԱՐԱԹԱԹԵՐԹ
ՏՂՈՑ ԲԱԺԻՆԸ



Ի. ՏԱՐԻ

Բ. Երջան, Թիւ 41—42



Յրդ ՊՐԱԿԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆ Է

Անմեղութիւն	ՄԿՐՏԻՉ ԱՃԵՄԵԱՆ
Հելլենական ժողովրդուրդ	Եր. 8. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ
Տղամբեռուն Պարիկը	ԾԵՐՈՒԿ ՀԱՆԻՆ
Եւրոպ. Երածութիւն (նօրայու)	ՑԱՐՈՒԹԻՒՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Դիմեռնակին Դասը	ՄԻՇԱԼԼԵ
Արջը Եւ Կիրառը (պատկերով)	ՊՐԱՆՏԻՒՆԻ
Աշխարհի Ամէնին Պացիկ Մելենակարը	
Դարդ (Մանկական Ռանաւոր)	
Շազանակը (Շա Պացիկնեռուն Համար):	

Հանելուկ, հաւուական հացումներ, Եւայլի:

Ա. ԺԱՄԱՆԻՔ Ա. Ա. ԳՈՅԱՆ Պատկերի Ա. Պատկերի

Գին 20 գրամ

Տպագրութիւն ԾԱՂԻԿ, Կալաքա.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Կանանց յատուկ թիւը Տարեկան 50 դրուշ, Վեցամսեայ 25 դրուշ:
Տղոց յատուկ թիւը Տարեկան 30 դրուշ:
Երկուքը մէկ՝ Տարեկան 75 դրուշ:

ԳԱԼՍՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Կանանց յատուկ թիւը Տարեկան 54 դրուշ, Վեցամսեայ 27 դրուշ:
Տղոց յատուկ թիւը Տարեկան 30 դրուշ:
Երկուքը մէկ՝ Տարեկան 75 դրուշ:

ԱՐՏՈՒՍ.ՀՄԱՆԻՒ ՀԱՄԱՐ

Կանանց յատուկ թիւը Տարեկան 12 ֆրանք:
Տղոց յատուկ թիւը Տարեկան 7 ֆրանք:
Երկուքը մէկ՝ Տարեկան 18 ֆրանք:

ԲԱՅԱՐԾԱԿԱՊԵՍ ԿԱՆԱԿԻԿ

Բաժնեգինները կարելի է դրկել Օսմ. մանաւրօսթով, փոխ՝ գրով,
եւ կամ դրոշմաթուղթով (20 հատը 20 դրուչի հաշուով):

Մանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող
ամէն կարգի գործառնութեանց համար դիմել միայն՝

ՀՀԱԳԻԿ ՀՆԴԿԻ

ՃՐԱԿԱԿԱՆ ԱՐԺԱՎՈՐ ԽԱՆԾԵ ՆՈՄԸ Վ

«ԾԱ.ՂԻԿ» ՀԱ.ՆԴԵՍ

Կ. Պոլիս, Ղալաթիա, Գուրշունլու խան, թիւ 7

ՍԱ.ԳԱ.ԵԱ.Ն ՏՊԱ.ՐԱ.Ն

REVUE "DZAGHNIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, № 7.

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐԺՈՒՄԱՆ

ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵՍԱ


Կ. Պոլիս, Դատրդիւդ, Մկոհիւրսար հաստիսի

7րդ Տարեշրջան

Ազգային եւ օտար ընտրեալ ուսուցչական խումբի մը կողմէ
բաց ի տոհմային ուսմանց եւ զիտութեանց տարերքէն, հիմ-
նական կերպով կ'աւանդուին հայերէն, օսմաններէն, ֆրանսերէն,
անդղիերէն եւ զերժաններէն լեզուները՝ հանդերձ խօսելավարժու-
թեամբ։ Մասնաւոր խնամքով կ'աւանդուին նաեւ տնարարու-
թիւնը, ձեռագործը, ձեւ ու կարը, դաշնակն ու ջութակը եւ գծա-
գրութիւնը։ Վարժարանին յայտագիրը փափագողաց կը դրկուի։
Բանակցութեան համար դիմել վարժարան, առ Տեսուչն կամ
Տեսչուհին։

ԵԱԶԴԻ

(670) *P. SUPH*—*PHH* 44-42 (*PHU.4* 3) 2 001*h**v**h* 1907



Աշխարհի Առևնեն Պատմիկ Մեթեսավաբը

Արժանիքը տարիքը շատ ունենալուն վրայ չէ։
Այս ճշմարտութիւնը ապացուցանելու համար բաւական է
Կիպսըն Ռիշարտի պատութիւնը։ Ամերիկայի մէջնանաւոր մարդ
մը գարձած է Կիպսըն Բիշարտու, որ կը կոչուի «Թզուկ մեքենա-
վարը»։ Այս տղան յորս տարեկան եղած ատեն կարող էր կառա-
խումք մը վարել Ամերիկայի ամէնէն մեծ երկաթուղիի գծին վրայ։
Բայց ընկերութիւնը այդ գործը չյանձնեց այս մանկիկին, կարդ
մը վախկոտ մարդոց խօսքերուն վրայ թէ՝ իրենց հոգին չեն կրնար
յանձնել ատանկ տղեկի մը ձեռքը։

Կիպսըն կը ճանչնար վայրաշարժին ամէն մասերը և աւելի կը

ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ

Մատղաշ Արդիինէն՝ սիրուն, լեզուանի
Որ նուրբ ու խարտեալ մազեր ալ ունի,
Հարցընէ ինծի միամշտաբար՝
«Ենչու ճերմակ են մազերգ հոյեղբար» :

Մինչ այսպէս կընձռու հարցեր թոթովէ՝
Անուրջ մը տիտուր զիս կը վրդովէ,
Ու ակամայ իր թարմ այտերուն հետ
Բաղդատեմ ճակախս խորշոմներ վէտ վէտ :

Ի՞նչ ակնածանքով քովիկըս խոհեմ
Կը նստի երբոր կարդամ կամ դրեմ.
Անմեղ համոզմամբ արդեօք խորհի ան
Թէ ճերմակ մազն է շընորհ հըմուռթեան :

Ո՞հ ան չգիտեր, ան չգիտեր որ
Գիտութիւնս ամբողջ, երկերս ալ բոլոր
Սիրով կը զոհեմ փոխան իր մատղաշ
Հասակին, փոխան իր մազին խարտեալ :

ՄԿՐՏԻՉ ԱՃԵՄԵԱՆ

Նախընտրէր կաժմայի մը մօտը պառկիլ, քան իր պզտիկ անկողինին վարագոյններուն տակ : Ժամը 82էն մինչև 99 քիլօմէթր արագութիւն ունեցող և գիշեր ցորեկ անընդհատ սուրացող կառախումբը չէր սարսափեցներ զայն : Այդ ժամանակ Միացեալ նահանգներուն ամէնէն մեծ պղտիկ մարդն էր :

Ան այսօր 12 տարու է, կը պաշտօնավարէ իւնիւն Բասիֆիք մեծ ընկերութեան մէջ, այն գիծին վրայ ուր իր առաջին փորձերը կատարած էր :

Այս պզտիկ մեքենավարը արկածներ ալ ունեցաւ ուր տարօրինակ քաջութիւն ցոյց տուաէ : 1899ին օր մը աւաղակներ յարձակեցան իր գտնուած կառախումբին վրայ և կէս միկոն Փրանքի չափ գումար մը պարունակող երկու վակօնները քայքայեցին: Թզուկ մեքենավարը այդ ատեն նոյն կառախումբին մէջ էր, և բնաւ չի շփոթեցաւ կամ չլախցաւ այդ ահռելի արկածէն : Այս պղտիկ մարդուն մէջ հսկայի մը կարողութիւնները կային :

ԱՇԽԱՐՀԱՇՐՋԻԿ ՊՐԱՆՏԻՆԻՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Պրանտինի Խտալացի երիտասարդ մըն է, որ քալկով աշխարհի շրջանը ըրաւ տասը տարիէն։ Այդ մարդը, իր ոտքերով քաւած է 5 միլիոն մեթր ճամբայ։ Պրանտինի իր այս արկածախնդրութեան ձեռնարկած է առանց գրպանը տասը փարառնենալու. իր հետ առած էր միայն տոպրակ մը՝ ուր կը պահէր իր ուտելիքները և իր կիթառը։ Այս նուագարանը ոչ միայն իր մինակութեան մէջ զի՞նքը կը միթարէր, այլ իր ապրուստն ալ անով կը ճարէր քաղաքներու մէջ նուագելով։ Պրանտինի տասը տարուան արշաւի մէջ ունեցած է արկածներ, որոնց ամէնէն յուղումնալիցը կը գտնէ հետեւեալները։ Ահա թէ ինչպէս կը պատմէ ինք այդ արկածները ուր մօտէն զգացած է մահուան սարսափը. —

ԱՐԶԸ ԵՒ ԿԻԹԱՌԸ

Անգամ մը Ռուսիոյ մէջ էի։ Բէթէրսպուրկի և Մոսկուայի միջև կը ճամբորդէի, սոսկալի ցուրտ մը կար որ կը խածնէր միսերս. իսկ ձիւնը այնքան առատ էր որ քայլերս առաջ չէին երթար։ Ասկից զատ, մոտահոգ ալ էի։ Էսած էին ինծի չթէ այդ կողմերը արջեր կային, որոնք այդ միջոցին—նոյեմբերին — շատ չար կ'ըլլային։

Այսպէս աչքս ականջս բացած կ'առաջանայի, երբ պղտիկ անտառու մը դուրս ելած պահուս հետուէն կենդանի մը տեսայ, զոր հետուէն պարզ ոչխար մը կարծեցի. բայց արջ մըն էր, որ քիչ ետք իր հասակովը ցցուեցաւ դէմո։ Ճերմակ ձիւնին վրայ իր պատկերը կը տեսնուէր յատակօրէն, ինչ որ ինծի սլոտի զրուցնէր ուրիշ պարագայի մը։ Բայց հոն, այդ ամայութեան մէջ, ուր ո և է արգելք չկար անոր ճիրաններուն և իմ փափուկ մարմինիս միջև, խնդալու ատեն չէր։

Արջը կ'երեւի թէ մեծ փափաք մը զգաց զիս ճաշակելու։ Վկսաւ արագ արշաւել իմ կողմս։ Ո՛րչափ շուտ կը քալէր այդ գանդաղ կարծուած կենդանին։

Պայքարիլ տսանկ գաղանի մը դէմ, անոր յօշոտիչ ճիրաններուն դէմ։ բայց ի՞նչպէս։ իբր ամբողջ զէնք՝ կիթառս և պարէնի տոպրակս միայն ունէի։ Պահ մը չփոթեցայ, վազեցի, ետ դար-

ձայ . փրկութեան միջոց մը կը վնսուէի : Մառ մը միայն աչքիս
զարկաւ . անոր վրայ խոյացայ և այսքան դիւրաւ մազլցեցայ
վրան որ հաւտալս չէր գար : Կտանգը ճարպիկ ըրած էր զիս :
Բայց փութկոսութեանս մէջ վար ինկան կիթառս և պարէնի
տոսլրակը :

Արջը մօտեցաւ . դունչը վեր երկարելով քանի մը անդամ հո-
տոտեց : Ետքը , մտածելով անշուշտ որ անպատճառ պարտա-



ւոր եմ ծառէն իջնել՝ հանգիստ
մը նստաւ տակը : Իր պղտիկ
աչուկները կը փայլէին , և մերթ
ընդ մերթ կարծես թէ կը ժպտէր
փառաւոր ճաշին համար զոր պիտի
ընէր : Եւ ե՞ս էի իր առագայ
խորովածը :

Ի՞նչ սիտի ըլլար , մինչև ե՞րբ
սիտի կենար արջը հոն , ինծի
դարանակալած : Ցուրտը մարմինս
կը փատցնէր : Անօթութենէս
ստամոքսս կը ճանկոտուէր : Կա-
րողութիւնս կ'սպառէր տակաւ :
Կը մտածէի որ երկար ատեն չպի-
տի կրնայի այդպէս ծառի մը վրայ
մազլցած մնուլ : Գազանը վախո-
ցնելու և փախցնելու համար ,
անոր գլխուն նետեցի ինչ որ կար
գրապաններուս մէջ , նոյն իսկ կօ-
չիկս հանեցի և գլխուն զարկի :

Այս բանը փոխանակ զայն
խրտչեցնելու , գրգռեց : Արջը

յարձակեցաւ պարէնի տոսպրակիս վրայ և զայն սրատոտեց : Եր-
շիկի խոշոր կատր մը դուրս ինկաւ , որուն հոտը կարծես գոհացուց
զայն . մէկ պատառով կլլեց : Այս աղանդերը անտարակոյս իր ա-
խորժակը բացաւ , որովհետեւ իր փայլուն պղտիկ աչքերը բարձ-
րացուց գէպի իմ սկ սրունքներս , որոնք ծառն ի վար կախուած
էին , և որոնք ապահովաբար երկու համով երչիկներու պէս կ'ե-
րեւէին անոր :

Ցուրտէն և փուքէն կէս մեռած վիճակի մը հասած էի :

Բարեբախտաբար արջին ուշադրութիւնը դարձաւ օղիի մինի
մը որ տոպրակէս դուրս գլորած էր : Հետաքրքրութեամբ զայն
հոտոտեց . ճիրանովը կրցաւ հանել խիցը և հեղուկը լզեց լեզուին

Ժայրովը։ Պէտք է հաւատալ թէ առաջին անգամ էր որ արջը ալքոլ կը խէր։ Խրեն դասն եկած ըլլալու էր որ բարկութեամբ անզին հրեց շիշը։ Խուլ ոռնում մը արձակեց և իր կատաղութիւնը թափեց խեղճ կիթառիս վրայ որ ծաւին տակը ինկած էր։

Բայց իր ճիրաններուն չփումին տակ նուազին խոչոր թելերը երկար, լալաղին ձայն մը հանեցին և լարուած թելերէն մէկ հատը խզուելով, ուժգին մը դարնուեցաւ կենդանիին դունչին։ Արջը այս անսպասելի և աղմկոտ յարձակումն անակնկալի եկած, կասկածով նայեցաւ այդ գործիքին զոր առաջին անգամ կը տեսնէր, և ապահովաբար խիստ սպառնալից գտնելով զայն, պոչը ծունկերուն մէջ առած սկսաւ վախչիւ և քիչ ետք անհետացաւ հորիզոնին վրայէն։

Կիթառիս չնորհիւ աղատուած էր։

ՊՐԱԿՏԻԿԱ

[Իր երկրորդ արկածը ասկէ աւելի սիրուն ողատմուածք մը՝ էշերուն բարեկամութիւնը՝ պիտի հրաարակենք յոջորդ թիւով։]

Շ Ա Գ Ա Ն Ա Կ Ը

—Գիտե՞ս, լրագիրները ի՞նչ են գրեր
աղատաւ

—Ոչ մայրիկ, ի՞նչ են գրեր

—Անցած օր, Մաղրիգիւղի մէջ երկու տարեկան պղտիկ աղջիկ մը շագանակ մը դրած էր բերանը և կը խաղարչ Յանկարծ պտուղը լեզուին վրայէն փախաւ և գնաց աղջիկին կոկորդը մեաց։ Պղտիկը սկսաւ պօռալ լաւ բայց ձայնը չէր ելլեր. կը խղզուէր։ Մայրիկը բը ժիշկի տարաւ իր սիրական մանկիկը. սակայն բժիշկը մինչեւ որ շագանակը անոր կոկորդէն հանեց, խեղճ պղտիկ աղջիկը մեռաւ։ Հիմա տղաս, տեսա՞ր որ պղտիկ անհոգութիւն մը ի՞նչ վիասներ կուտայ շատ անդամ։

ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բ.՝ՀԵԼԵՆԱԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՅ, ԻՐ ԵԱՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէական թուականէն տասնեալ դարեր առաջ յաջորդական գաղթականներու շարք մը, ոմանք Արքիպեղագոսի ճամբով, ոմանք ալ Վուգորի և Ելլեսպոնտոսի նեղուցներէն գալով, Ասիոյ բարձր սարահարթերէն Եւրոպայի ամէնէն աւելի արեւելեան թերակղզին մէջ բերած էին ա'յն ցեղերը՝ որոնց միացումն ապա կաղմուեցաւ յոյն կոմ հելլենական ժողովուրդը։ Այս գաղթականութիւններէն վերջինները քրիստոնէական թուականէն տասը դար առաջ այլեւ կը դադրին։

Գաղթականները իրենց հետ կը բերէին շատ հին կրօնական աւանդութիւններ, և կէս մը հովուական և կէս մը երկրագործական կերանքի մը սովորութիւնը։ Հումկու, աշխոյժ, վայելչադէմ ցեղ մըն էր, նուրբ իմացականութեամբ, վաւվառն և պայծառ երեւակայութեամբ ցեղ մը։

Հիանալի էր ա'յն երկիրը՝ ուր կը հասաւատուէր հետզհետէ այս ցեղը։ լուսափայլ երկնքի մը տակ, ընդհանրապէս խաղաղիկ ծով մը, բաղմաթիւ ապահով ծովածոցեր կը ճեւացնէր այն լեռնաշղթային մէջ, որ կարծես Յունաստանի ողնայարը կը կազմէ։ Բաղմաթիւ կղզիներ կը դիւրացնէին նաւարկութիւնը։ Լեռները ամէն կողմ անտառաշատ կամ ծառափիտ, կը պարունակէին բեղնաւոր հովիաններ, և բնակիչներուն համար իրեւ թումբ կը ծառայէին արտաքին ասպատակութեանց դէմ։ Հողը և կլիման նըսպասաւոր էին մարմինը ուժեղ, միտքը գործունեայ ընելու համար։ Ա'յնքան ճոխ չէր բնութիւնը որ թուլութիւն պատճառէր մարդուն, և ոչ ալ ծայրայեղ էին օդին անհարթութիւնները։ Մըտաւոր և կանոնաւոր դործունէութեան մը արդիւնքները պարզելու, ցուցադրելու յարմարագոյն թատրոն մըն էր, միշտ պատրաստ։

Յոյն դասական գրականութեան տասը կամ տամներկու դարերուն մէջ, շատ փոփոխութիւններ առելի ունեցան Յունաստանի մէջ, այսինքն մինչեւ քրիստոնէական թուականին երկրորդ դարուն վերջերը, և երրորդին սկիզբները։ Սակայն հակառակ բոլոր

այս փոփոխութիւններուն, ցեղին լսկական յատկութիւնները երբեք անհետ եղած չեն, — այսինքն իմացականութեան սուր նրբութիւնը և երեւակայութեան վառվառութիւնը, յատկութիւններ՝ որոնց սքանչելի կերպով կը յարմարէր լեզու մը, արտայայտիչ և ճկուն միանգամայն, վերըստկան և գունագեղ, թէ՛ արձակի և թէ բանաստեղծութեան պատշաճ :

Ո՞չ մէկ արտաքին ազդեցութիւն խեղաթիւրած չէ այս յատկութիւնները։ Ասիկա ըսել չէ թէ Յունաստան շատ բան չի պարտիր Սրեւելքի. բայց ստոյգ է թէ ո՛չ Հոմերոս, ո՛չ Եսքիլէս, ո՛չ Սովոկլէս, երբ իրանց քերթուածները կը շարադրէին; աչքի տակ չունէին Եգիպտոսէն կամ Ասիայէն եկած նմանօրինակ գործեր, որոնք իբրեւ կաղապար ծառայէին անոնց։ Ուստի կրնանք ըսել թէ յունական գրականութիւնը ո՛չ մէկ նախնական գրականութեան հետեւած է և թէ յոյն մատենագիրներուն բոլոր գործերը խկացէս բնատոնմիկ ներշնչումէ մը ծնած են :

Այս գրականութիւնը գարմանալի կերպով պարզ է, զայն մշակող ժողովուրդին զարգացման ընթացքին հետեւած է, ժամանակի և իորհրդածութեան բնական ընթացքով, առանց արտաքին ցնցող միջամտութեան մը։ Դարերու ընթացքին մէջ կարելի է քայլ առ քայլ հետեւիլ այդ գրականութեան յուշիկ և հանդարտ քայլերուն, որ միշտ ժողովուրդին զարգացման համապատասխան և անոր պէտքերուն ու միջավայրի պայմաններուն պատկերն է, շարժած է անհատի մը պէս որ կը մկան նախ տղայ ըլլալ, և կամաց կամաց միայն, տարիներու կանոնաւոր ընթացքով մը, կը հասնի պատանեկութեան, և յետոյ արլունքի :

Հայ գրականութեան մէջ այս պատկերը կարելի չէ ճշգել։ Եղարուն մէջ մեր գրականութիւնը գլխաւորաբար հելլենական և չափով մըն ալ լատինական գրականութեան ցնցող միջամտութեան և ազդեցութեան տակ կը գտնենք յանկարծ։ հելլենականին ցուցացումն է մեր գրական հայելին։

Այս է պատճառը որ ամբողջ գարեր Յոյները ունեցած են մանկութեան և պատանեկութեան յատկութիւնները։ անոնց գրականութեան մէջ նախ և առաջ գերակշիռ կը գտնենք երեւակայութիւնը և բանաստեղծութիւնը։ Յետոյ կուգայ առնական տարիքը և անոր հետ հասուն խորհուրդը, որ կը ստեղծէ արձակին հրաշակերտները։ Վերջերը դարձեալ, խորհրդածութիւնը միշտ իր գործունէութիւնը շարունակելով, քննազատութիւնը և գիտութիւնը առաջին տեղը կը բռնեն, մինչեւ որ վերջ ի վերջոյ ծերութիւնը կը ժամանէ և ստեղծագործով ոյժը գրեթէ բոլորովին անհետ կ'ըլլայ։

Սիրելի՝ տղաքներ, այսպիսի կանոնաւոր և կարգապահ գրաւ կանութեան մը համառօտ պատմութիւնը շահեկան չէ միթէ, և նոր ցեղերը իրենց մտքի ու սրտի շարժումները գրաւորապէս կու կելու և զտելու համար կրնայի՞ն միթէ տարբեր կաղապարի մը վրայ ձուլել իրենց գրականութիւնը։ Այս', մեր Ե. Դարու նախնիք իրաւունք ունէին, երբ հեղէն գրականութիւնը կ'անուանէին «Դայեակ իմաստութեան»։

Այս ընդհանուր և համառօտ գիծերէն վերջ սկսի՞նք հիմա բուն գրական պատմութեամբ զբաղվի։

Եր. Տ. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

ՎՐԻՊԱԿ. — Անցեալ շարթուան դասին մէջ Տեմոսթենէսը պէտք է կարգալ Դեմոսթենէս։

ՏՂԱՔՆԵՐՈՒՆ ՊԱՐԻԿԸ

(Հ Է Փ Ե Ա Թ)

Տղաքներուն պարիկը լսելով որ տղաքներուն շատը իր վիճակէն դո՞չ չէ, ճամբորդութեան մը սկսաւ և որպէս զի չճանչցուի պարզ գիւղացին հագուստ հազար։

Հաղիւ թէ աշխարհի վրայ ոտք դրած էր, պղոմիկ անտառի մը մէջ տեսաւ տասնեակ մը տղաք որոնք թիթեանիկներ որսալով կ'զրունէին։ Ամէնքն ալ չնշասպառ և զուարթ կը վազվատէին։ Պարիկը մօտեցաւ անոնց եւ ըսաւ. — Ի՞նչ երջանիկ երեւոյթ ունիք, պղտիկ բարեկամներս։

Այս պահուն տղաքներէն ամէնէն ուրախսը պատասխանեց. — Այս', որովհետեւ կը խաղանք. բայց աւելի երջանիկ սկսի ըլլայինք եթէ ամբողջ օրը կարենայինք խաղալ։ Դժբախտաբար պարտաւորուած ենք շատ ձանձրացուցիչ բաներ սովորելու։

— «Զ, այս', այս, շատ ձանձրացուցիչ բաներ» կրկնեցին միւս ընկերները։

Բարի Պարիկը այս ծոյլ տղաքները տեսնելով վշտացաւ. և մօտեցաւ աղջիկներու խումբի մը որոնք գնդակ կը խաղային։ Անոնց ալ նոյն հարցումը ըրաւ. բայց այս պղտիկ աղջիկները տղաքներէն խելացի չէին։ Ոչ միայն խաղալու համար շատ ժամանակ կ'ուղէին, այլ կ'ուղէին որ աղւոր գարդեր ունենային, աղւոր առարկաներ, կը փափաքէին աւելի սիրուն և աւելի հարուստ ըլլակ և դեռ ինչեր, ինչեր . . .

Պարիկը փորձեց դամսնք չափաւորել և խրառել, բայց աղջիկները զայն ծաղրեցին :

Միայն պղտիկ աղջիկ մը մէկ կողմ քաշուած, լուռ ու տիսուր կը կենար :

— «Ի՞նչ կայ որ ատանկ ախուր ես» հարցուց Պարիկը բարութեամբ :

— Այս բարի հայրիկ, մայրիկս մայրիկս մեռան ես թշուառ մնացի :

— Ցաւդ ի՞նչպէս կրնայ թեթենալ.

— Ինծի աշխատութիւն, քաջութիւն և համբերութիւն տալով, բարի մայրիկ: Բայց դուն ալ ի՞նչ կրնաս ընել. դուն ալ ինծի պէս աղջատ կ'երեւիս:

Պարիկը այս աղնուութենէն հմայուած, ըսաւ.

— Սիրելի աղջիկս, կ'ուզմա ինծի հետ բնակիկ, իրաւ շատ հարուստ չեմ, բայց իրար շատ պիտի սիրենք, և այս սէրը մեր վիշտերը պիտի մեղմացնէ:

Աղջիկը սիրով ընդունեց և ծերունիկն ձեռքերը պագաւ, տնօր ապացուցանելու համար թէ միշտ հնագանդ պիտի ըլլայ:

Այս պահուն, պարիկը յանկարծ ձեւափոխուեցաւ, ձեւափոխելով նախ պզտիկը: Երկուքն ալ ճերմակ, ճիւնի պէս ճերմակ շրջազգեստներ հագած էին և գլուխնին վարդի պսակներով զարդարուած էր: Պարիկը աւելի ըլլալով իր ձեռքին մէջ ոսկի գաւազանիկ մը ունէր:

Այս տեսարանին առջև բոլոր տղաքը և աղջիկները որոնք մերժած և ծաղրած էին այդ պարզուկ կինը, հիացիկ վաղեցին անոր մօտ և շրջապատեցին երկուքը:

Պարիկը ըսաւ անոնց: — «Ես եկած էի ձեզի տեսնելու և ազնուութեան և ուսումնասիրութեան պարգևները շնորհելու ձեզի, որով միայն մարդ կրնայ ապագային երջանիկ ըլլալ. բայց դուք ինչ խնդրեցիք որ գոհացում տամ ծուլութեան, հաճոյքներու և պարապ բաներու համար ձեր ունեցած հակումներուն: Ատիկա ձեզի կրնայ դժբախտութեան առաջնորդել, հետեւաբար բան մը չեմ կրնար ընել ձեզի համար:

Ետքը, Պարիկը դառնալով աշխատասէր և աղնիւ աղջկան, յարեց: — Գալով քեզի, զաւակս, միայն դուն խելացի ես ասոնց մէջ. ասկէց ետք ինծի հետ պիտի ապրիս իմ օդային գեղեցիկ դղեակիս մէջ...

Այս ըսելով, Պարիկը իր ձեռքի գաւազանը դարկաւ օդին, և շնորհալի կառք մը տեսնուեցաւ: Մինչ տղաքը ապշահար կը նայէին, պարիկը իր նախընտրածին հետ նստաւ այդ կառքը և անմիջապէս անհետացաւ օդին մէջ:

ԵԿՐՈՊԱԿԱՆ ԵՐԱՖԾՍՈՒԹԻՒՆ (8)

Տ Օ Գ Յ Շ Ա Ր

Տողաշարը հինգ հորիզոնական գիծերու ամբողջութիւնն է որոնց վրայ կամ մէջտեղ կը դրուին ձայնանիշերը :

Տողաշար


5 ♫♯	—————	4. ԺԻՂՎ
4 "	—————	5 "
3 "	—————	2 "
2 "	—————	1 "
1 "	—————	

Տողաշարին գիծերը և միջոցները վարէն վեր կը համրուին . — հինգ գիծ և չորս միջոց ունի տողաշարը :

Բանալի

Տողաշարին վրայ ձայնանիշերու անունները կը ճանչնանք բանալի կոչուած նշաններու միջոցով :

Գլխաւոր երկու բանալիներ կան , սօլի բանալի և ֆաի բանալի . — Սոլի բանալին իր անունը կուտայ տողաշարի երկրորդ գիծին . ուրիմն տողաշարի Բ . գիծը սօլ մը կը ներկայացնէ .



Ցախ բանալին կը դրուի տողաշարի չորրորդ գիծին վրայ և իր անունը կուտայ տողաշարի Դ . գիծին , ուրիմն տողաշարի Դ . գիծը կը ներկայացնէ ֆա մը :




Առ այժմ միայն Սոլի բանալին պիտի սովորինք : Սոլի բանալին գործածուած ատեն տողաշարի գիծերը վարէն սկսելով , մի , սօլ , սի , ոհ , ֆա անունները կ'առնեն .




իսկ միջոցներ՝ ֆա, լա, տօ, մի.



Տողաշարի Ա. գիծին տակ դրուած ձայնանիշը ուէ իսկ Ե.
գիծին վրայ դրուածը ոօլ մըն է:



Սօլի բանալին կը պարունակէ ուրեմն հետեւեալ ձայնանիշները :



Վ. Ա. Ռ Դ

Խարսմիք, ճերմակ, դեղին վարդ,
Պատուհանիս սիրուն զարդ,
Ի՞նչ աղուոր գոյն, բոյր ունիս
Որ ամէնէն կը սիրուիս:
Ես ալ արդեօք չե՞մ կրնար
Սիրուիլ միշտ ու անդադար:
Պլատիկ տղաք, լաւ գիտնանք,
Երբ աղնիւ բոյր ունենանք,
Տեսք մը մաքուր ու անմեղ
Իը սիրեն մեղ ամէն տեղ:

ԾԻԾԵՌՆԱԿԻՆ ԴԱՍԸ

Դասը շահեկան է : Մայր ծիծեռնակը կը բարձրանայ իր թեւ-
մերուն վրայ : Պղտիկը ուշադիր կը հակի, և ինք ալ ինքինքը
կը բարձրացնէ քիչ մը : Ետքը, կը տեսնէք որ կը թռչտի ան, կը
նայի, իր թեւերը կը շարժէ . . . : Աս ամէնքը աղէկ կ'երթայ և
բոյնին մէջ տեղի կ'ունենայ : Դժուարութիւնը կը սկսի երբ կարգը
գայ անկից դուրս ելլելուն : Մայրը զայն կը կանչէ և անոր կը
ցուցնէ պղտիկ ուտելիքներ . վարձատրութիւն կը խոստանայ, կը
փորձէ իր ճագը հրապուրել ճանճիկ մը իրը խայծ ցոյց տալով :

Պղտիկը կը վարսնի տակաւին : Ինքինքնիդ անոր տեղը
դրէք : Անորը՝ սենեակին մէջ քայլ մը առնելուն չի նմանիր՝ երբ
ձեր մէկ կողմը մայրիկը կայ մէկ կողմը քուրիկը, և երբ իյնաք
ալ բարձ կայ տակերնիդ : Այս ծիծեռնակը որ ելեզեցին դանդա-
կատան բարձրը թուելու իր առաջին դասը կուտայ, կ'աշխատի
քաջալերել իր ճագուկը, և գուցէ քաջալերել նաև ինքինքը՝ այս
վճռական պահուն : Վստահ եմ որ, երկուքն ալ տկնարկով կը չա-
փեն վիճը և իրենց աչքերը կը յառեն սալայատակին : Ինծի հա-
մար այս սեսարանը մեծ է և յուղիչ : Պէտք է որ պղտիկը հաւա-
տայ իր մայրիկին, պէտք է որ մայրն ալ օժանդակէ ճագուկին
թեւերուն, որոնք այնքան անվարժ են գեռ . . . Երկուքն ալ
Սստուած կը պահանջէ Հաւատաք և Քաջարտութիւն, որ աղնիւ
և վեհ մեկնակէտն է կեանքին : Բայց ահա ճագուկը հաւտացած
է, վստահ է և խոյացած . ալ չպիտի իյնայ : Դոդդոչուն, ան կը
թռչտի իր մայրիկին սրտապնդիչ ճիշկրէն քաջալերուած : Ամէն
բան վերջացած է : Ասկից ետք ան պիտի թռչի անսարքեր հովե-
րուն ու մրրիկներուն :

ՄԻՇՉԵ

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԽԻ

Տիվրիկի աղդային կալուածներուն հոդաբարձութեան ատե-
նապես հաշատուր էֆ . Երեկիւոն մէկ տարեկան Մանկանց ծա-
ղիկ նուիրեց Տիվրիկի աղդային վարժարանին :

Նշան էֆ . Փափակեան մէկ տարեկան Մանկանց Մաղիկ նուի-
րեց Ակնայ Կամարակապ գիւղի վարժարանին :

Նշան էֆ . Գայլքնեան երկու օրինակ Մաղիկ նուիրեց Մուշի
և Սերաստիոյ որբանոցներուն :

Միհրան էֆ . Գասարճեան մէկ տարեկան Մաղիկ նուիրեց Թո-
գատի աղդային վարժարանին :

ՄՏՔԻ ԶԲՈՍԱՆՔ

Թիւ 2 հանելուկին լուծումն էր Ծաղիկ և ո՛չ թէ վարդ կամ ժաղիկ մը, ինչպէս շատեր գրեր էին:

Թիւ 2 հաշուական հարցումին պատասխանն էր 60, քանի որ պարուէզը երբ քառակուսի ըլլայ, անկիւններու ծառերը երկու կողմին համար ալ կը համրտին:

Պատասխանողներէն կան որ միայն հանելուկը ճիշդ լուծած են, իսկ ուրիներ ալ հաշուական հարցումը ճիշդ լուծած են: Ասոնց ըոլորին ալ անունները կը հրատարակենք, որոնք են.—

Մայր Վարժարանին՝ Աստղիկ Ն. Պօղոսեան, Եղիա Լ. Եղիսէեան, Հայկ Կ. Պարտիղպանեան, Գ. Գասպարեան, Ալիքսան Ս. Նալպանտեան, Արթին Տամամեան, Մկրտիչ Թաշճեան, Վահրամ Մէտէֆճեան, Հերմինէ Ալլահվէրտեան, Փայլինէ Ս. Պօղոսեան, Տիգրան Թ. Թամրզեան, Դրիգոր Ա. Գարիպեան, Լուիզ Խաչիկեան, Երուանդ Մ. Մարգարեան, Յարութիւն Մ. Երանոսեան, Յակոբիկ Գ. Աճառեան, Անժէլ Նշանեան, Անդրանիկ Ա. Մխիթարեան, Մկրտիչ Յ. Պիւլպիւլեան, Երուանդ Բ. Ճիզմէճեան, Արմենակ Սարգիսեան, Բիւզանդ Ռոկերիչեան, Վարդուհի Մելիքեան և Արուսեակ Էսմէրեան:

Կեդր. Անիակերթարանին՝ Արամ Կ. Մաղմանեան, Մարգիս Տիգրիկէրեան, Արմենակ Յարութիւնեան, Վաղարշակ Գ. Գաղմանձեան, Տիգրան Մ. Ալաջատուրեան, Հայկ Ճօլուեան, Յակոր Գ. Չօպանեան, Գեղամ Պապիկեան, Արմենակ Մ. Նաղարեան, Զարմայր Սարաֆիեան, Հրանդ Մանուկեան, Աւետիս Զաքարեան, Մկրտիչ Քէշիշեան, Լեւոն Պետիկեան, Յակոբ Փափաղեան, Հայկ Վարդաղեան և Օննիկ Ե. Յակոբեան:

Բերայի կանանց Վարժարանին՝ Վահրամ Տ. Զիլինկիրեան, Վէերժին Բէքմէզեան, Սիրարփի Տէր-Ներսէսեան, Միհրան Յովսէփիեան, Նշան Տույուլտըեան, Հայկ Պէրպէրեան, Զաքար Պալեան, Մարի Վարդանեան, Սուրէն Ճանեան, Ագապի Յովշասիփեան, Կարապետ Փափաղեան, Վահրամ Պաղտասարեան, Աննիկ Քէշէկերեան և Նունուֆար Ե. Յակոբեան:

Գատըգիւղի Արամեան Վարժարանին՝ Վահան Գ. Ախորմէեան, Գեղամ Ա. Նախնիքեան, Պօղոս Ասատորեան և Ս. Գ. Թօղաթեան:

Վիեննական Միհրարեան Վարժարանին՝ Թաղէսս Սիուեան, Արամ Աբրահամեան, Երուանդ Աբէլեան և Արտաշէս Արամեան:

Բագրատունի Առեւտր. Վարժարանին՝ Հրանդ Գուրապեան, Յարութիւն Փիլիճեան և Գրիգոր Գավանօղեան (Մէկ թողթի վրայ մէկէ աւելի անուն չենք ընդունիր):

Տէմիրեան Վարժարանէն՝ Գեղամ Մեսիահան, Նորայր Մազ-
լըմեան և Մկրտիչ Տէմիրեան։
Գուրուցեշնի Ազգ. Վարժարանէն՝ Երուանդ Գէորգեան և
Զարեհ Լևոնեան։

Մազրիզի Ազգ. Վարժարանէն՝ Գէորգ Փափաղեան և Յով-
ակի Սվաճեան։

Նիկողոսեան Վարժարանէն՝ Էմմա Հ. Սոսառուր և Նարդիկ
Ա. Փանոսեան։

Օրբագի Ազգ. Վարժարանէն՝ Սուրբիկ Հէքիմեան։
Սամարիոյ Անաւատ Ծղութեան Բերգ Վարժարանէն՝ Մրուսեակ
Յ. Շահպաղեան։

Սուրբ Յովհան Ռոկեբերանի Վարժարանէն՝ Մարգիս Խ. Սա-
րաֆեան։

Բանկալրի Աղյատասիրաց Վարժարանէն՝ Մաթենիկ Ակոնեան։
Պէյզօգէն՝ Վահկ Ա. Շատան, Խասզի Ինիկ Լևոն Միհրանեան,
Ազգ. Հիւանդանոցէն՝ Յալսէփ Ստիսեան, Խւսկիւտարէն՝ Եւգինէ
Դլանունի, Սան Սրհգանոյէն՝ Զարմայր Մերկերեան, Կէտիկ Փա-
շայէն՝ Հերմինէ Հարաբեմեան, նաև Գրիգոր Մանթիկեան, Շ.
Վարդանեան և Միխիթար Մ. Միխիթարեան։

Երկուքը հաւասարապէս լուծողներէն վիճակը շահեցաւ Մայր
Վարժարանի աշակերտաներէն Յակոբիկ Մատոնեան որ պիտի ստո-
հայ Յ ամիս Մաղիկ։

Թիի Յ ՀԱՆԵԼՈՒԿ

Մտերիմն եմ արեւին ու անձեւին,
Գիրկիս մէջը բիւր երանգներ կ'երեւին։
Զիս չէք տեսներ ամէն ատեն, ամէն օր,
Բանաստեղծ մը գլուխ ընտրեց ինծի նոր։
Հուկք տեսնեմ, ի՞նչ եմ որ։



Թիի Յ ՀԱՇՈՒԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Մէկը իր ունեցած դրամին 1/3ովէ գնեց գրասեղան մը. յետոյ
մնացած դրամին 5/8ովն ալ վերաբեր մը գնեց, քովը մնաց 81 դէ։
Պահնել թէ ո՞րչափ դրամ ունէր և գրասեղանին ու վերաբերին
ի՞նչ վճարեց։

Թէ հանելուկը և թէ հաշուական հարցումը միեւնոյն ժամա-
նակ լուծողներէն մէկը վլճակով կտտանայ Յ ամիս Մաղիկ։ Իսկ,
մէկը կամ միւսը զատ զատ լուծողներուն անունները կը
հրատարակուին։

Պատասխանները պէտք է գրել հետեւեալ կորոնին վրայ,
կամ կտրօնը պէտք է կցել պատասխանին։ Հակառակ պարագային
ընդունելի չպիտի ըլլան։